



ՎԱՀՇ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի դեկան,
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԱՐՄԱՆ ԴԱՂՈՒՆՑ

ՀՀ ԿԲ ՖԿՎ ապահովագրական ընկերությունների
վերահսկողության առաջին բաժնի պետ,
ՀՊՏՀ բանկային գործի և ապահովագրության
ամբիոնի դոցենտ, տնտեսագիտության թեկնածու

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՆԱԳԱՎԱՌԻՆ ԲՆՈՐՈՇ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գյուղատնտեսությանը բնորոշ են մի շարք ռիսկեր՝ բնակլիմայական, սանիտա-
րական, օրենսդրական, արտադրության գործոնների քանակական ու որակական փո-
փոխություններով պայմանավորված, որոնցից առանձնահատուկը, քանակային և
ծավալային առումով ամենամեծը բնակլիմայական ռիսկերն են:

Թվարկված ռիսկերի կառավարման մեթոդներից աշխարհում առավել հայտնի
են գյուղացիական տնտեսությամբ զբաղվողների կողմից ոչ գյուղատնտեսական ապ-
րանքների վաճառքից ստացված այլ եկամուտների աղբյուրների ստեղծումը, գյուղա-
տնտեսական արտադրանքի բազմազանեցումը, ֆինանսական հավելյալ միջոցների
ծնավորումը, ֆորվարդային գնանշումը, ֆյուչերսային, օպցիոն, լիզինգային կամ այլ
պայմանագրերի կնքումը, ագրոապահովագրությունը:

Հիմնաբառեր. գյուղատնտեսություն, գյուղատնտեսական ռիսկեր, բնակլիմա-
յական ռիսկեր, գյուղատնտեսական ռիսկերի կառավարման
մեթոդներ, ագրոապահովագրություն

Q13, Q15, Q18, Q56, G22

Գյուղատնտեսությանը բնորոշ բազմաթիվ ու բազմապիսի ռիսկերը ժա-
մանակի տարբեր պահերին իրենց բացասական ազդեցությունն են թողնում
ոլորտի կայունության և արդյունավետ զարգացման վրա՝ պայմանավորված
ինչպես բնակլիմայական (փոթորիկ, կարկուտ, ջրհեղեղ, հիվանդություններ),
այնպես էլ այլ գործոններով (տեխնիկայի անսարքություններ, օրենսդրական

ռիսկեր): Ռիսկերի առկայությունն օբյեկտիվ անհրաժեշտություն է դրանք կառավարելու նպատակով համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու համար: Ըստ այդմ՝ նախևառաջ հարկ է դասակարգել գյուղատնտեսության բնագավառին հատուկ ռիսկերն ըստ առաջացման հիմքի: Գոյություն ունեն գյուղացիական տնտեսություններին ներհատուկ ռիսկերի տարբեր դասակարգումներ, որոնք կարելի է ընդհանրացնել հետևյալ խմբերում.

- բնության բացասական ազդեցությամբ պայմանավորված **բնակլիմայական ռիսկեր**¹, որոնք հանդես են գալիս տարերային աղետների, կենդանիների, բույսերի հիվանդությունների, կլիմայական փոփոխությունների և այլնի տեսքով,
- **սանիտարական ռիսկեր**՝ կրծողներ, վնասատուներ, համաճարակ, զանազան հիվանդություններ և այլն,
- **շուկայական ռիսկեր**՝ կապված գյուղատնտեսական ապրանքների տեղական կամ միջազգային շուկաների գնային տատանումների, ապրանքների նկատմամբ սահմանված որակական պահանջների փոփոխությունների և այլնի հետ,
- **օրենսդրական ռիսկեր**, որոնք ի հայտ են գալիս օրենսդրությամբ սահմանված նորմերի չպահպանման կամ դրանց փոփոխության դեպքում նոր օրենքների հնարավոր բացասական ազդեցությամբ,
- **արտադրության գործոնների քանակական ու որակական փոփոխություններ**, որ արտահայտվում են բույսերի սերմերի, պարարտանյութերի որակի վատացմամբ, օգտագործվող տեխնիկական միջոցների անսարքությամբ, արտադրողականության կրճատմամբ և նմանատիպ այլ գործոններով,
- **այլ ռիսկեր**, որոնք պայմանավորված են մարդկային գործոնով և ընդգրկված չեն նախորդ խմբերում՝ պատերազմներ, ահաբեկչական ակտեր, ֆինանսատնտեսական ճգնաժամեր, գյուղատնտեսական կենդանիների գողություն, սպանդ, գյուղատնտեսական գույքի կողոպուտ, վնասում և այլն:

Նշված խմբերից առանձնահատուկը բնակլիմայական ռիսկերն են, որոնք աչքի են ընկնում ինչպես մեծ անորոշությամբ, այնպես էլ քանակական ու ծավալային մեծությամբ: Այս ռիսկերի պարագայում մարդկային գործոնը կամ մարդու ազդեցությունը շատ ավելի փոքր է, իսկ երբեմն էլ բացակայում է: Բնակլիմայական ռիսկերն, իրենց հերթին, կարելի է դասակարգել տարերային աղետների և հիվանդությունների: Վերջիններս հաճախ կախված են տվյալ տարածաշրջանից:

Հարկ է նշել, որ, այս առումով, ՀՀ տարածքը նույնպես աչքի է ընկնում բարձր ռիսկայնությամբ: Բնակլիմայական ռիսկերից մեր երկրին առավել բնորոշ են կարկտահարությունը, ցրտահարությունը, երաշտն ու հեղեղումները: Ընդ որում, երկրի հյուսիսային, արևելյան և հարավային մասերի լեռնային շրջանները ենթարկվում են սեզոնային հեղեղումների, կարկտահարության և երաշտի, Արարատյան դաշտավայրը՝ երաշտի, վաղ ցրտահարության և չոր պայմանների, Երևանից հյուսիս գտնվող կենտրոնական հատվածը՝

¹ Մեկ այլ դասակարգման համաձայն՝ բնակլիմայական ռիսկերը կարելի է տարանջատել եղանակային գործոնով պայմանավորված ռիսկերի (երաշտ, ցրտահարություն, ծյուն, սառցապատում, ջրհեղեղ, հեղեղում, փոթորիկ, կարկուտ և այլն) և երկրաբանական ռիսկերի (երկրաշարժ, սողանք, հրաբուխ և այլն): Բնակլիմայականների մեջ հարկ է ներառել նաև սանիտարական ռիսկերը:

կարկտահարության, երաշտի և վաղ ցրտահարության, իսկ հյուսիսարևմտյան շրջանը ենթակա է նշված արտակարգ երևույթների բոլոր տեսակներին:

Վերջին տարիներին, տարբեր գնահատականներով, բնական աղետների հետևանքով ՀՀ գյուղատնտեսությանը պատճառվել է տարեկան 15–20 միլիոն ԱՄՆ դոլարի վնաս, որի մեծ մասն առաջացել է կարկտի հետևանքով: Աղյուսակում ներկայացված է վերջին տարիներին ՀՀ գյուղատնտեսությանը նշանակալի վնասներ հասցրած բնական աղետների վերաբերյալ տեղեկատվություն:

Աղյուսակ

ՀՀ-ում 2007-2014 թթ. տեղի ունեցած բնական աղետների համառոտ նկարագիրը²

Տարեթիվ	Տարածաշրջան (մարզ)	Վնասի տեսակը	Վնասի չափը (մլրդ դրամ)
2014	Արարատ, Արմավիր, Կոտայք, Վայոց ձոր, Արագածոտն, Սյունիք, Տավուշ	ցրտահարություն	11.1
2014	Շիրակ, Լոռի	կարկտահարություն	ճշտված չէ
2013	Արմավիր	կարկտահարություն	25.3
2012	Արագածոտն	կարկտահարություն	0.33
2011	Եղեգնաձոր, Արարատ	հեղեղումներ	ճշտված չէ
2010	ՀՀ	կարկտահարություն	4.2
2010	Սյունիք	ցրտահարություն, կարկտահարություն, երկարատև անձրևներ	1.37
2010	Սյունիք	հավերի ժանտախտ, աֆրիկյան ժանտախտ	0.07
2010	Սյունիք	կարկուտ, սելավ	ճշտված չէ
2010	Տավուշ	կարկտահարություն	1.4
2009	ՀՀ	կարկտահարություն	1.9
2009	Տավուշ	կարկտահարություն	0.58
2008	Տավուշ	ցրտահարություն	0.44
2007	Գեղարքունիք, Կոտայք, Արարատ	հեղեղումներ	ճշտված չէ

Ներկայում Հայաստանի Հանրապետությունում աղետների հետևանքով կորուստներ ունեցող գյուղացիական տնտեսությունների հոգսը պետությունն ի գործ է ածող ծախսերով իր վրա վերցնելու՝ պետական բյուջեի սահմանափակ միջոցների պատճառով: ՀՀ Կառավարության պահուստային հիմնադրամից հատկացվող միջոցները բավարարում են հատուցելու հասցված վնասների փոքր մասը միայն³: Հետևաբար՝ օբյեկտիվ անհրաժեշտություն է առաջանում որոնելու գյուղացիական տնտեսությունների կրած վնասները փոխհատուցելու և այդ ոլորտում առկա ռիսկերը մեղմելու՝ զարգացած տնտեսություն ունեցող երկրներում արդյունավետ կիրառվող այլ մեխանիզմներ, գնահատելու ՀՀ-ում դրանք տեղայնացնելու հնարավորությունները:

Մի շարք երկրների փորձը վկայում է, որ գյուղատնտեսության բնագավառում առկա են ռիսկերի կառավարման հետևյալ մեթոդները.

² Տե՛ս ՀՀ մարզպետների հաշվետվությունները (օրինակ՝ Հաշվետվություն ՀՀ Արագածոտնի մարզպետի 2012 թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին, էջ 93, ՀՀ Տավուշի մարզի 2012–2015 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր, էջ 96 և այլն):

³ Ոչ պաշտոնական գնահատականներով (համաձայն tert.am կայքի) միայն 2013 թ. զարնանը կարկտի հետևանքով գյուղացիական տնտեսությունների կրած 25 մլրդ դրամ վնասից պետության պահուստային հիմնադրամի և մասնավոր հանգանակությունների հաշվին հատուցվել է 240 մլն դրամը միայն:

- գյուղացիական տնտեսությամբ զբաղվողների կողմից ոչ գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված այլ եկամուտների աղբյուրների ստեղծում,
- գյուղատնտեսական արտադրանքի բազմազանեցում,
- ֆինանսական հավելյալ միջոցների ձևավորում,
- ֆորվարդային գնանշում, ֆյուչերսային կամ օպցիոն պայմանագրերի կնքում,
- լիզինգային պայմանագրերի կնքում,
- այլ պայմանագրերի կնքում,
- ագրոապահովագրություն, որը ներառում է գյուղացիական տնտեսությունների բերքի, համապատասխանաբար՝ եկամուտների չստացման ապահովագրությունը, գյուղատնտեսական կենդանիների, ինչպես նաև շենքերի ու շինությունների ապահովագրությունը:

Գյուղացիական տնտեսությամբ զբաղվողների կողմից ոչ գյուղատնտեսական ապրանքների վաճառքից ստացված այլ եկամուտների աղբյուրների ստեղծումը բավական բարդ գործընթաց է, քանի որ գյուղաբնակ վայրերում հիմնականում չկան արտադրական ձեռնարկություններ կամ գործարաններ, որոնք կապահովեն նմանատիպ եկամուտներ, իսկ այլընտրանքային եկամուտներ ունեցող գյուղական բնակչությունը սովորաբար չի զբաղվում գյուղատնտեսությամբ՝ այլ գործունեության համեմատությամբ վերջինիս պակաս եկամտաբերության, առավել ռիսկայնության, աշխատատարության, արտադրանքի իրացման խնդիրների և մի շարք այլ օբյեկտիվ պատճառներով:

Գյուղատնտեսական արտադրանքի բազմազանեցման վերաբերյալ անհրաժեշտ է նշել, որ, ի տարբերություն խոշոր գյուղացիական տնտեսությունների, հասարակ գյուղական բնակչությունը մի շարք պատճառներով՝ կլիմայական պայմաններ, մասնագիտացում որևէ ճյուղում, արտադրանքի իրացման հետ կապված խնդիրներ և այլն, հնարավորություն չունի գյուղատնտեսական տարբեր կուլտուրաներ մշակելու կամ գյուղատնտեսական կենդանիների բուծմամբ զբաղվելու:

Ֆինանսական հավելյալ միջոցների ձևավորումն այսօր դժվարին խնդիր է ոչ միայն գյուղատնտեսությամբ զբաղվող սուբյեկտների, այլ նաև այլ տնտեսավարողների համար: Ասվածի վկայությունն է գյուղացիական տնտեսությամբ զբաղվողների և գյուղական բնակչության մեծ մասի՝ զանազան վարկավորման ծրագրերում ընդգրկվածությունը:

Միջազգային ֆինանսական շուկաների դինամիկ բնույթը հանգեցրել է տարատեսակ ֆինանսական գործիքների լայնածավալ օգտագործմանը⁴: Դրանցից են, օրինակ՝ **ֆորվարդային գնանշումը, ֆյուչերսային և օպցիոն պայմանագրերը**: Հաշվի առնելով ՀՀ արժեթղթերի շուկայի զարգացման արդի աստիճանը, ածանցյալ գործիքներով կատարված գործարքների փոքր ծավալը, ինչպես նաև գյուղացիական տնտեսություններ վարողների համար արժեթղթերի շուկայում գործառնություններ իրականացնելու անհարմարություններն ու այդ մշակույթին անտեղյակությունը՝ կարող ենք վստահեցնել, որ ֆյուչերսային, ֆորվարդային և օպցիոն պայմանագրերի կիրառությունը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում մոտ ապագայում իրատեսական չէ:

⁴ Տե՛ս ՀՀ ՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտում և ներկայացում», §5, 7:

Լիզինգային պայմանագրերի կնքման առումով հարկ է նկատել, որ ՀՀ-ում առանձին բանկերի կամ վարկային կազմակերպությունների կողմից⁵ ներկայում գյուղատնտեսության լիզինգ իրականացվում է: Չնայած գյուղացիական տնտեսությունների համար ոչ հարմար տոկոսադրույքների կամ այլ պայմանների առկայությանը, այդուհանդերձ, համակարգն արդյունավետ գործում է: Սակայն հարկ է նշել, որ, գյուղատնտեսությանը պատճառված վնասների հետևանքների վերացման առումով լիզինգային պայմանագրերի կնքումը ամենարդյունավետ եղանակը չէ. դա հիմնականում նպաստում է գյուղատնտեսական արտադրության կազմակերպման խնդիրների լուծմանը՝ կազմակերպման սկզբնական փուլում նոր տեխնիկայի կամ սարքավորման ձեռքբերմանը:

Ջարգացած տնտեսություն ունեցող երկրներում, թերևս, հաջողությամբ կիրառվում է *գյուղատնտեսական ռիսկերի ապահովագրությունը կամ ագրո-ապահովագրությունը*: Ընդ որում, դա իրականացվում է ինչպես պարտադիր, այնպես էլ կամավորության սկզբունքով, այդ թվում՝ պետական մասնակցությամբ կամ աջակցությամբ: Քանի որ գյուղատնտեսական բնագավառին հատուկ ռիսկերի կառավարման ընդհանուր մոտեցում գոյություն չունի, դրանք տարբերվում են ըստ երկրների՝ բնութագրելով տնտեսության ամենախոցելի հատվածը: Անկախ գյուղատնտեսության ապահովագրության կիրառման տարբեր մոտեցումներից՝ զարգացած տնտեսություն ունեցող երկրների մեծ մասում ընդունված միասնական տեսակետն այն է, որ գյուղատնտեսական ռիսկերի կառավարման գործում պետության պարտադիր մասնակցությունն անհրաժեշտություն է:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ ՀՀՍ 32 «Ֆինանսական գործիքներ. բացահայտում և ներկայացում»:
2. Արման Դադունց, Պետության մասնակցությամբ ագրոապահովագրության միջազգային փորձը, «Տնտեսության համաչափ զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում», գիտաժողովի նյութեր, Եղեգնաձոր–2013:
3. Հաշվետվություն ՀՀ Արագածոտնի մարզպետի 2012 թ. գործունեության և մարզի սոցիալ-տնտեսական իրավիճակի մասին:
4. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 2012–2015 թթ. սոցիալ-տնտեսական զարգացման ծրագիր:

⁵ Օրինակ՝ «ԱԿԲԱ լիզինգ» վարկային կազմակերպություն ՓԲԸ, «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒԿԿ առևտրային կոոպերատիվ:

ВАГЕ МИКАЕЛЯН

Декан "Финансового" факультета АГЭУ, доцент,
кандидат экономических наук

АРМАН ДАГУНЦ

Начальник первого отдела надзора над страховыми компаниями ЦБ РА,
доцент кафедры "Банковского дела и страхования" АГЭУ,
кандидат экономических наук

Методы управления рисками типичных для отрасли сельского хозяйства. – Сельскому хозяйству присущи климатические, санитарные, законодательные риски, риски связанные с изменениями количественных и качественных факторов производства, из которых наиболее специфичные и наибольшие в количественном и объемном исчислении - это климатические риски.

Наиболее известные в мире методы управления вышеперечисленных рисков - это создание лицами занимающимися сельским хозяйством других источников доходов с продаж сельскохозяйственных товаров, диверсификация сельскохозяйственной продукции, формирование дополнительных средств финансирования, форвардное ценообразование, подписание фьючерзных, опционных, лизинговых или других договоров, агрострахование.

Ключевые слова: сельское хозяйство, сельскохозяйственные риски, климатические риски, методы управления сельскохозяйственных рисков, агрострахование.

Q13, Q15, Q18, Q56, G22

VAHE MIKAELIAN

Dean of the "Finance" Department at ASUE,
PhD in Economics, Associate Professor

ARMAN DAGHUNTS

Chief of Insurance Supervision Division, CB, RA,
Associate Professor at the Chair of
"Banking and Insurance" at ASUE, PhD in Economics

Risk Management Methods Typical for the Sphere of Agriculture. – The risks to agriculture represent risks determined by quantitative and qualitative variations of natural, climate, sanitary, legislative, industrial factors, more specifically - the highest in quantity and coverage are the natural risks.

The following methods are the most popular among the existing methods of managing the above-mentioned risks worldwide: diversification of income sources by farmers by means of sales of non-agricultural goods, diversification of agricultural output, formation of additional financial resources, forward pricing, futures, options, leasing or other agreements as well as insurance of agricultural risks.

Key words: agriculture, agricultural risks, natural risks, the managing methods of agricultural risks, agroinsurance.

Q13, Q15, Q18, Q56, G22